

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2004 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-104 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի աղյուսակի 1-ին կետի «բ», «ե», «զ» և «թ» ենթակետերը, 2-րդ կետի «բ» ենթակետը, 3-րդ կետի «բ» ենթակետը և 4-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 20-րդ հոդվածի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 26.1-ին և 27.1-ին կետերով.

«	26.1. պետական ռեգիստրի կողմից առևտրային կազմակերպության ֆիրմային անվանման գրանցումը մերժելու մասին առանձին որոշման տրամադրման համար	բազային տուրքի տասնապատիկի չափով	»,
---	---	----------------------------------	----

«	27.1. իրավաբանական անձանց պետական միասնական և պետական գրանցամատյաններից մեկ սուբյեկտի վերաբերյալ պետական ռեգիստրում պահվող և ինտերնետային կայքում տեղադրված ամբողջական տեղեկությունների, ինչպես նաև իրավաբանական անձանց կանոնադրությունների պատճենների տրամադրման համար	բազային տուրքի եռապատիկի չափով	»:
---	---	--------------------------------	----

Հոդված 3. Օրենքի 20-րդ հոդվածի աղյուսակի 28-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հողված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.	Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը
	<p>«Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «ե», «զ», «թ» ենթակետերը ներկայումս սահմանում են պետական ռեզիստրում գրանցման ենթակա առևտրային կազմակերպությունների կամ դրանց առանձնացված ստորաբաժանումների գրանցման (հաշվառման) վկայականի փոխարեն նորը տալու համար՝ բազային տուրքի 24-ապատիկի, ոչ առևտրայինի դեպքում՝ բազային տուրքի 20-ապատիկի, պետական գրանցում իրականացնող այլ մարմնի կողմից գրանցված այլ կազմակերպություններին, դրանց առանձնացված ստորաբաժանումներին պետական ռեզիստրի կողմից գրանցման (հաշվառման) վկայական տալու համար՝ բազային տուրքի, հիմնարկների հաշվառման վկայականի փոխարեն նորը տալու համար՝ 20-ապատիկի չափով պետական տուրքի գանձում:</p> <p>Նույն հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետը սահմանում է անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման վկայականի փոխարեն նորը տալու համար՝ բազային տուրքի 6-ապատիկի, 3-րդ կետի «բ» ենթակետն՝ համատիրությունների կամ դրանց առանձնացված ստորաբաժանումների գրանցման (հաշվառման) վկայականի փոխարեն նորը տալու համար՝ բազային տուրքի կրկնապատիկի, իսկ 4-րդ կետը՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների գրանցամատյանում յուրաքանչյուր գրանցում կատարելու համար՝ բազային տուրքի, նույն կետի «ա» ենթակետն՝ առանց սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների գրանցամատյանում փոփոխություններ կատարելու բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի վկայագիր տալու համար՝ յուրաքանչյուր վկայագրի համար՝ բազային տուրքի չափով պետական տուրքի գանձում: Օրենքի 20-րդ հոդվածի 28-րդ կետը սահմանում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցների և պետական գրանցամատյաններից մեկ ընկերության մասնակիցների վերաբերյալ պետական ռեզիստրում պահվող տեղեկությունների տրամադրման համար՝ բազային տուրքի չափով պետական տուրքի գանձում, մինչդեռ նույն հոդվածի 27-րդ կետն արդեն իսկ կարգավորում է իրավաբանական անձանց պետական միասնական և պետական գրանցամատյաններից մեկ սուբյեկտի վերաբերյալ պետական ռեզիստրում պահվող տեղեկությունների տրամադրման համար նույնչափ պետական տուրքի գանձում:</p> <p>«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործակալությունում պետական գրանցման և պետական հաշվառման</p>

գործընթացներն ամբողջությամբ էլեկտրոնային են և 27-րդ հոդվածի 8-րդ մասի, 35-րդ հոդվածի 8-րդ մասի և 57-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին համաձայն, որպես անհատ ձեռնարկատեր, անձի հաշվառումը, իրավաբանական անձի պետական գրանցումը, առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի հաշվառումը (փոփոխությունների գրառումը) հավաստվում է միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածքներով, իսկ 42-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին համաձայն՝ գրանցամատյանում փոփոխությունների գրառումը հավաստվում է գրանցամատյանի համապատասխան քաղվածքով: «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ իրավաբանական անձանց պետական գրանցման և անհատ ձեռնարկատեր հաշվառված անձանց պետական հաշվառման վկայականները ուժի մեջ են նույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներին համաձայն՝ Ֆիրմային անվանման գրանցման գրավոր մերժումը տրամադրվում է համապատասխան պետական տուրք վճարելու պայմանով, իսկ 61-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համաձայն՝ պետական միասնական գրանցամատյանի ամբողջական տեղեկությունները, ինչպես նաև իրավաբանական անձանց կանոնադրությունների պատճենները տրամադրվում են Օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարումը կատարելուց հետո:

Հիմք ընդունելով «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի վերը նշված հոդվածների պահանջները, իրավաբանական անձանց պետական գրանցման և անհատ ձեռնարկատեր հաշվառված անձանց պետական հաշվառման վկայականների ուժը կորցրած լինելը, անհրաժեշտություն է առաջացել ուժը կորցրած ճանաչել Օրենքի 15-րդ հոդվածի աղյուսակում 1-ին կետի «բ», «ե», «զ», «թ» ենթակետերը, 2-րդ կետի «բ» ենթակետը, 3-րդ կետի «բ» ենթակետը, 4-րդ կետը, 20-րդ հոդվածի աղյուսակում 28-րդ կետն ու 20-րդ հոդվածի աղյուսակում լրացնել նոր՝ 26.1-ին և 27.1-ին կետերը՝ կարգավորելու համար Ֆիրմային անվանման պետական գրանցումը, ինչպես նաև պետական միասնական գրանցամատյանի ամբողջական տեղեկությունների և կանոնադրությունների պատճենների տրամադրումը:

2.

Առաջարկվող կարգավորումների բնույթը

	<p>«Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքը համապատասխանեցվել է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին՝ պետական գրանցման և պետական հաշվառման, պետական միասնական գրանցամատյանից տեղեկությունների, ինչպես նաև իրավաբանական անձանց կանոնադրությունների տրամադրման գործընթացներն կարգավորելու առումով:</p>
3.	<p align="center">Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք</p>
	<ol style="list-style-type: none"> 1. Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետ. 2. Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ. 3. Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժին:
4.	<p align="center">Ակնկալվող արդյունքը</p>
	<p>«Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի ընդունման դեպքում ակնկալվում է կարգավորել ֆիրմային անվանման պետական գրանցման, ինչպես նաև պետական միասնական գրանցամատյանի ամբողջական տեղեկությունների և կանոնադրությունների պատճենների տրամադրման հետ կապված իրավահարաբերությունները:</p>